

ԴԻԼԻՋԱՆ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ և ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԱՆ  
ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Հարությունյան Բ.Ն., Ստեփանյան Ջ.Հ., Էմինյան Ռ.Ս.,  
Մայսուրյան Կ.Վ., Չիչակյան Ս.Ս.*

Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ, Երևան, Հայաստան

Դիլիջանն իր բնա-կլիմայական պայմաններով և գեղատեսիլ լանդշաֆտով համարվում է Հայաստանի կուրորտային գանձերից մեկը, միջին լեռնա-անտառային գոտու տիպիկ կլիմայական առողջավայր:

Դիլիջանը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելյան մասում Աղստև գետի գեղատեսիլ հովտում ծովի մակերեկույթից 1255 մ բարձրության վրա, հարավից գոտևորված է Փամբակի լեռներով և հարավ-արևելյան ուղղությամբ ձգվում դեպի Արեգունու լեռները: Հյուսիսից պարփակված է Բազումի լեռներով, իսկ հյուսիս-արևելյան ուղղությամբ ձգվում է Մուրգուզի լեռնազանգվածը, ձևավորվում են մի շարք լեռնաձյուղեր և գոյանում են խորը, նեղ կիրճեր գառիվեր լանջերով և ժամանակավոր ու մշտական հոսք ունեցող արագավազ գետակներով:

Դիլիջանը և հարակից տարածքը հարուստ է փարթամ անտառներով, հիմնական ծառատեսակներն են՝ կաղնի, հաճար, սոճի, բոխի, շրջանը եզակի է նաև իր սոճու անտառներով: Բարձր լեռնային գոտին պատած է ալպիական և սուբալպիական բուսականությամբ: Հարուստ է բազմաթիվ քաղցրահամ աղբյուրներով, հանքային ջրերի ելքերով, պելոիդներով (տորֆ, կավ, ցեխ): Դիլիջանից ոչ հեռու խիտ անտառում է գտնվում ոչ մեծ, բայց գեղեցիկ «Պարզ լիճ»-ը: Գեղատեսիլ շրջակայքը, պատմական հուշարձանները, բարենպաստ կլիմայական պայմանները հնարավորություն են ընձեռում կազմակերպել ինչպես մոտակա, այնպես էլ հեռավոր տուրիզմ:

Դիլիջանի կլիմայի ձևավորումը պայմանավորված է նրա աշխարհագրական դիրքով, յուրահատուկ ռելիեֆով, ռադիացիոն ռեժիմով, մթնոլորտի շրջանառության առանձնահատկություններով: Արևափայլի տարեկան տևողությունը 2095 ժամ է, ավելի բարձր, քան Դավոսում (1878 ժ), Լեյցենում (Շվեյցարիա, 1980 ժ), Աբասթումանում (1911 ժ): Տարվա ընթացքում ուլտրամանուշակագույն ճառագայթների մուտքի բալանսը դրական է: Կլիման բնութագրվում է արևոտ, «չափավոր սառը» ձմեռով և «չափավոր տաք» ամառով, առանձնանում է արևի ճառագայթային էներգիայի առկայությամբ է:

Ի տարբերություն Հայաստանի մյուս շրջանների (Արարատյան դաշտ, Արմավիր, Շիրակ) կլիման բարեխառն է, թույլ արտահայտված ցամաքայնությամբ: Յուրահատկություն է - հարաբերական խոնավության արժեքների ձմռան և ամառվա ամիսների տարբերությունն աննշան է: Դիտվում է անոմալ երևույթ և

օրինաչափության խախտում՝ ամառը հարաբերական խոնավությունն ավելի է, քան ձմռանը՝ 63% հունվարին և 76% հուլիսին:

Շրջանն առանձնանում է մթնոլորտային տեղումների համեմատաբար զգալի քանակով՝ 593 մմ տարվա ընթացքում, գարնանային մաքսիմումով – 454 մմ:

Կլիմայական ռեժիմը Դիլիջանում բնութագրվում է արևի և ուլտրամանուշակագույն ճառագայթային էներգիայի առավելագույն արժեքներով, չափավոր խոնավությամբ, հողմնային ռեժիմի աննշան տատանումներով, մթնոլորտի թթվածնի կշռային պարունակության զգալի արժեքներով:

**Ձմեռը** ցուրտ է, անհողմ, օդի միջին ջերմաստիճանը ձմռան ամիսներին տատանվում է -1.0 - -2.0°C: Կայուն ձյունածածկ ձևավորվում է նոյեմբերի 23-ին, միջին բարձրությունը 18 սմ է, առավելագույնը – 39 սմ: Ձմռանը գերիշխում են «տաքացումներով» եղանակներ, երբ օդի միջին օրեկան ջերմաստիճանը բարձրանում է 0°C-ից: Եղանակի ձմեռային ռեժիմն առավել օպտիմալ է, լրիվ բացակայում է «զգալի սառնամանիքներով» եղանակի տիպը: Դիլիջանի ձմեռային եղանակի ռեժիմը բարենպաստ ձևով տարբերվում է նույն բարձրություն ունեցող մյուս շրջաններից: Հնարավոր է նաև մեթեոռեակցիաներ ազգաբնակչության մոտ: Նշված փաստը թելադրում է անհրաժեշտություն բուժական, տուրիստական, առողջարանային համալիրներին կից նախագծել նաև միջանկյալ ամբուլատոր բնույթի օբյեկտներ՝ հանգստացողների, բուժվողների, տուրիստների կանխարգելիչ ստուգման նպատակով: Ձմռանը թթվաշնի կշռային պարունակությունը մթնոլորտում ունի առավելագույն արժեք՝ 272 գ/մ<sup>3</sup>:

**Ամառը** սկսվում է մայիսի երրորդ տասնօրյակից և տևում մինչև հոկտեմբերի առաջին տասնօրյակը: Եղանակային ռեժիմը բարենպաստ է : Գերակշռում է «արևոտ, չափավոր խոնավ» եղանակային տիպը, որի կրկնվածությունը հուլիսին 16 օր է, օգոստոսին՝ 17 օր: Զգալի կրկնվածություն ունի «շատ շոգ - շատ չոր» եղանակային տիպը՝ հարաբերական խոնավությունը առավոտյան ժամերին և կեսօրից հետո հասնում է 80-85%: Հիդրոթերմիկ այս ռեժիմը թելադրում է առանձնահատուկ մոտեցում կլիմայաբուժարանների, լողավազանների, մանկական հիմնարկների նախագծման ժամանակ նկատի ունենալով մթնոլորտի բարձր խոնավությունը: Ամառը թթվածնի կշռային պարունակությունը մթնոլորտում ունի նվազագույն արժեք՝ 237 գ/մ<sup>3</sup>:

#### **Կլիմայաբուժության պայմաններ**

Տարվա տաք կեսին եղանակային պայմանները բարենպաստ են կլիմայաբուժական պրոցեդուրաներ կազմակերպելու նպատակով: Հունիսի առաջին տասնօրյակից մինչև հոկտեմբեր ամիսը հնարավոր է կլիմայաբուժական պրոցեդուրաների լայնածավալ կիրառում: Հունիսին «բարեխառն» «կումֆորտային» պայմաններն և էկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճանը 17-22°C դիտվում է 6-8 օր: Օդային լոգանքների կրկնվածության տոկոսը աճում է հուլիսին՝ 14 օր, օգոստոսին՝ 11 օր, սեպտեմբեր ամսին և օդաբուժության «կումֆորտային» պայմանները 14 օր: Արևաբուժությունը միանգամայն անհրաժեշտ պրոցեդուրա է,

**VII МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ**  
*Современные аспекты реабилитации в медицине*

---

մանավանդ մանկական և դեռահաս տարիքային կատեգորիայի համար: Արևային լոգանքները հնարավոր է ընդունել մայիսի վերջին տասնօրյակից մինչև հոկտեմբերի 15-ը: Առաջարկվում է մանկական առողջարանների, նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների բուժման, կոփման և կանխարգելիչ նպատակներով նախագծվող շենքերը համալրել արևաբուժության և օդաբուժության համար հարմարավետ տաղավարներով: Քամապաշտպան սարքավորումների կիրառման հետևանքով էֆեկտիվ ջերմաստիճանը բարձրանում է և «կոմֆորտային» լոգանքների պայմանները դիտվում են 21-24 օր: Ավելի բարենպաստ են արևաբուժության պայմանները՝ հունիսին 13 օր դիտվում են արևաբուժության «կոմֆորտային» պայմաններ: Հուլիս-օգոստոսին ձևավորվում են «դիսկոմֆորտային» պայմաններ՝ գերտաքացման զոնայում, որից խուսափելու նպատակով արևային լոգանքներն անհրաժեշտ է առավորտան մինչև ժամը 13-ը և հետձաշյա ժամերին (13-ից հետո):

Դիլիջանի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները միանգամայն բարենպաստ են Ադսոն գետի աջափնյա և ձախափնյա լեռնալանջերը օգտագործել ակտիվ հանգստի, իսկ բացատները՝ կլիմայաբուժություն կազմակերպելու նպատակով: Այստեղ լանդշաֆտային պայմանները (20-25° թեքվածություն, առատ բուսածածկ, փոքրիկ հեղեղատներ) անփոխարինելի են բուժական ֆիզկուլտուրայի բոլոր մեթոդների, բուժական չափավոր քայքի (терренкур) կիրառման համար: Անհրաժեշտ է համապատասխան խաղահրապարակների, վերականգնողական թերապիայի, համապատասխան մասնաշենքերի նախագծում առանց շրջապատող միջավայրերի էկոլոգիական հաշվեկշռի խախտման: Ամառվա ընթացքում կարելի է լայնորեն օգտագործել որոշակի անտառատեսակների (եղևնի, սոճի, կաղնի) առկայությունը մաքուր օդում կանխարգելիչ և վերականգնողական թերապիայի լայն կիրառման նպատակով:

Առաջարկվում է կլիմայաբուժության պրոցեդուրաներում ներառել նաև ջրաբուժություն (таласотерапия) կոփման, բուժման և կանխարգելման նպատակով: Անհրաժեշտ է լողավազանների լայնածավալ նախագծում և կիրառում՝ օգտագործելով Ադսոն գետի էկոլոգիապես մաքուր լեռնային ջրերը: Լեռնալանջերը հնարավոր է օգտագործել բուժական զբոսանք, սպորտային խաղեր կազմակերպման նպատակով: Շենքային պայմաններում ձմռանը թթվածնի պարունակությունը օդում 8-10գ/մ<sup>3</sup> -ով պակաս է, քան մաքուր օդում: Հետևաբար տարվա ցուրտ կեսին կլիմայաբուժությունը կիրառվում է որպես հիվանդությունները կանխարգելող, կոփող միջոց բուժական չափավոր քայքի, սպորտային խաղերի, միջոցառումների դահուկա-սպորտային արշավների միջոցով և համարվում է «բուժում թթվածնով»: Տարվա ցուրտ կեսին առաջարկվում է չափավոր կլիմայաբուժության լոգանքներ ընդունել առանձնացված հատուկ պատշգամբներում: Առաջարկվում է նաև կիրառել պոլիէթիլենային թաղանթներ, որոնք անցկացնում են արևի ինֆրակարմիր և ուլտրամանուշակագույն ճառագայթները:

**VII МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ**  
*Современные аспекты реабилитации в медицине*

---

Դիլիջանում և առավել ևս լեռանլանջերում կայուն ձյունաշերտը ձևավորվում է դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից և պահպանվում է մինչև ապրիլի 5-6-ը: Ձյան շերտի 30 սմ բարձրությունը կայուն հիմք է դառնում սպորտային միջոցառումներ կազմակերպելու համար:

Առաջարկվում է՝

- շրջապատող լեռների բնական տեռասները օգտագործել որպես տրամպլիններ,

- սահնակա-դահուկային միջոցառումների, հետիոտն արշավների կազմակերպման նպատակով նախագծել միջանկյալ կեմպինգների տեղադրում՝ կարճատև հանգստի համար,

Հաշվի առնելով տեղանքի լեռնագրությունը (շեղակի թեք լանջեր, լանդշաֆտի բնույթ) անհրաժեշտ է վերելակների տեղադրում: Թույլ թեքվածություն ունեցող լեռնալանջերի գագաթների մասերում, բարենպաստ պայմաններ ունեն մասսակայան զբոսանքների, սպորտային խաղերի համար: Դիլիջանի և հարակից տարածքների հիմնական բուժական գործոններն են՝ միջին և բարձր լեռնային կլիմա, բարենպաստ թթվածնային ռեժիմ անկրկնելի լանդշաֆտային առանձնահատկություններ, ընդերքային բուժական հանքային և քաղցրահամ ջրերի, պելոիդների առկայություն: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել վերջին ժամանակները մեծ կիրառում ստացած բուժական տուրիզմի զարգացմանը: Առաջարկվում է կեմպինգների, քոթեջների շինարարություն, ֆիզիոթերապևտիկ և ախտորոշիչ սարքավորումներով համալրված կաբինետների տեղադրում, բուժական պրոցեդուրաների կազմակերպում, բուժական մարմնամարզություն, չափավոր բուժական քայլքի և մերսումների կիրառումը:

Տարածքը նախատեսվում է օգտագործել որպես երկարատև և կարճատև հանգստի գոտի: Բուժական հանգիստը համալրող միջոցառումներից են՝ բուժական տուրիզմը, հետիոտն մարշրուտների մշակումը, տեսարժան վայրերի այցելությունը, ճարտարապետական և պատմական հուշարձանների ուսումնասիրումը: Հանգստի նման ճանաչողական ձևը մեծ նշանակություն ունի անձի ինտելեկտուալ և քաղաքակիրթ զարգացման, բնական պայմանների գեղագիտահոգեբանական ընկալման համար:

Այսպիսով, գիտական հետազոտությունների արդյունքները ռեալ նախադրյալներ են ստեղծում օգտագործել լանդշաֆտա-կլիմայական բարենպաստ պայմանները, ամառային և ձմեռային հանգիստ, բուժական տուրիզմ, էկոզբոսաշրջություն և կլիմայաբուժություն ծավալելու նպատակով, գիտական փորձաքննական հիմնավորումների արդյունքներով կյանք կմտնեն Հայաստանի համար ունիկալ բաղադրությամբ բուժիչ հանքային ջրերը, պելոիդները, որոնց լիարժեք և դիֆերենցված օգտագործումը կնպաստի տարաբնույթ հիվանդությունների կանխարգելմանը և բուժմանը: Դիլիջանը և նրա հարակից տարածքները բնութագրվում են որպես կլիմայական կուրորտային գոտի քաղաքակրթական ուղղվածությամբ: